Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 173 - Ա
որոշման

«Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 1014-Ա
որոշման

ԾՐԱԳԻՐ

«ԳՅՈՒՄՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի Կուսաստանի որբ, անտուն սաներից առնվազն 7-8 հոգի ընդունվում են Գյումրու տարբեր ԲՈՒՀ-եր և մասնագիտացված ուսումնարաններ: Սակայն նրանց մեծ մասը սովորելու ընթացքում ապրելու տեղ չունի, իսկ Կուսաստանում նրանք այլևս չեն կարող մնալ, քանի որ այնտեղ ապրում և դաստիարակվում են 3-18 տարեկան միակողմանի և երկկողմանի որբ երեխաներ և նպատակահարմար չէ հասուն երիտասարդների և մանկահասակ երեխաների նույն տեղում ապրելն ու սովորելը: Բացի այդ, Կուսաստանում պարզապես տեղ չկա նրանց համար:<br>Ծրագրով նախատեսվում է սաների, ինչպես նաև՝ այլ մարզերից եկած անապահով ընտանիքների լավ սովորող մինչև 40 ուսանողների համար ստեղծել մի երիտասարդական կենտրոն, ուր նրանք անվճար կապրեն ուսումնառության ընթացքում: Այնտեղ կստեղծվեն բոլոր կոմունալ-կենցաղային պայմանները, որպեսզի ուսանողներն իրենց ուշադրությունը կենտրոնացնեն ուսման վրա: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից: |

| | | |
|---|---|---|
| 3. | Բարեգործը | «ՔՆԵՎԱ» բարեգործական կազմակերպություն (ԱՄՆ), 150 միլիոն դրամ<br>«Օվոը Դ՚Օոիան» բարեգործական կազմակերպություն (Ֆրանսիա), 100 միլիոն դրամ<br>«Ռենովաբիս» բարեգործական կազմակերպություն (Գերմանիա), 100 միլիոն դրամ<br>«Նոթոը Աղմենի» բարեգործական կազմակերպություն (Ֆրանսիա), 100 միլիոն դրամ<br>«Կիրխ ին Նոթ» բարեգործական կազմակերպություն (Գերմանիա), 100 միլիոն դրամ<br>Կաթողիկե եպիսկոպոսների միություն (Իտալիա), 223 միլիոն դրամ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Անարատ հղության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան» կրոնական կազմակերպություն (հասցե՝ Գյումրի, Ե. Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Քաղաք Գյումրի, Եղիշե Չարենցի 6/1 տուն, սոցիալական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | 773,000,000 դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Շիրակի և Լոռու մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ գյուղերի անապահով ընտանիքների 17-25 տարեկան մինչև 40 երիտասարդ աղջիկներ և պատանիներ |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1) կենտրոնի շենքի կառուցում և հարակից տարածքի բարեկարգում՝ 729,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2022 թվականի հունվարի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը.<br>2) կենտրոնին անհրաժեշտ կենցաղային և տեխնիկական սարքավորումների ձեռքբերում և տեղադրում՝ 22,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը.<br>3) կենտրոնի կահավորում՝ 22,000,000 դրամ նախատեսվում է իրականացնել 2024 թվականի օգոստոսի 1-ից մինչև 2024 թվականի դեկտեմբերի 31-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1) շենքի կառուցման աշխատանքների իրականացում՝ 613,943,582 դրամ.<br>2) հարակից տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 115,056,418 դրամ.<br>3) կենցաղային և տեխնիկական սարքավորումների ձեռքբերում՝ 22,000,000 դրամ.<br>4) կենտրոնի կահույքի ձեռքբերում՝ 22,000,000 դրամ: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված ծախսեր այս ծրագրում չեն նախատեսված, քանի որ կազմակերպությունը վարչական և կազմակերպչական ծախսերի համար ունի առանձին ֆինանսավորում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ | Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետի աշխատակազմի, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների: Ինչպես նաև՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

12.03.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ